ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/97

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.03.2022թ. թիվ 26/26-1/4241-2022 գրությամբ «Լեմուր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի 04.03.2022թ. թիվ Ե/01/320-22 գրության հիման վրա, 14.03.2022թ. թիվ 26/26-1/4241-2022 գրությամբ նախաձեռնել է «Լեմուր» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Լեմուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Լեմուր» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Լեմուր» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/97 ընթացակարգի շրջանակներում 18.03.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 04.03.2022թ. թիվ Ե/01/320-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի և «Լեմուր» ՍՊԸ-ի միջև 23.12.2021 թվականին «ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-21/6-3» ծածկագրով կնքվել է համակարգչային տեխնիկայի մատակարարման պայմանագիր: Համաձայն պայմանագրի ընկերությունը պարտավորվել է պայմանագիրը կնքելուց հետո 45 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել համակարգչային տեխնիկա:

«Լեմուր» ՍՊԸ-ն չի մատակարարել համակարգչային պլանշետ (Tablet PC - 12.9-inch iPad Pro / Silver / 256 GB / Wi-Fi+Cellular / Silver) երկու հատ:

Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7 կետի բ) ենթակետը 28.02.2022 թվականին պայմանագիրը Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի կողմից միակողմանի լուծվել է և համապատասխան ծանուցումը հրապարակվել է www.gnumner.am կայքում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/97 ընթացակարգի շրջանակներում 18.03.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/97 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/97 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի և «Լեմուր» ՍՊԸ-ի միջև 23.12.2021թ. կնքվել է թիվ «ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-21/6-3» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

2. Պայմանագրի Հավելված N 2-ի՝ Մատակարարման ժամանակացույցի համաձայն՝ 2 հատ համակարգչային պլանշետի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը կնքելուց հետո 45 օրացուցային օրվա ընթացքում:

3. Պատվիրատուն «Լեմուր» ՍՊԸ-ին ուղղված 11.02.2022թ. թիվ Ե/01/216-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի և «Լեմուր» ՍՊԸ-ի միջև 23.12.2021թ. կնքվել է թիվ «ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-21/6-3» ծածկագրով պայմանագիր: Համաձայն պայմանագրի Ձեր ղեկավարած ընկերությունը պարտավորվել է պայմանագիրը կնքելուց հետո քառասունհինգ օրացուցային օրվա ընթացքում մատակարարել երկու հատ համակարգչային պլանշետ:

Առ այսօր Ձեր ընկերությունը չի իրականացրել վերոնշյալ պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Տեղեկացնում ենք, որ մինչև ս/թ. փետրվարի 18-ը պայմանագրային պարտավորությունները չկատարելու դեպքում համալսարանը պայմանագիրը համարելու է միակողմանի լուծված»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 28.02.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.03.2022թ. թիվ 26/26-1/4241-2022 գրությունը, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի 04.03.2022թ. թիվ Ե/01/320-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների

հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի և «Լեմուր» ՍՊԸ-ի միջև 23.12.2021թ. կնքվել է թիվ «ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-21/6-3» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

Պայմանագրի Հավելված N 2-ի՝ Մատակարարման ժամանակացույցի համաձայն՝ 2 հատ համակարգչային պլանշետի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը կնքելուց հետո 45 օրացուցային օրվա ընթացքում:

Պատվիրատուն «Լեմուր» ՍՊԸ-ին ուղղված 11.02.2022թ. թիվ Ե/01/216-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի և «Լեմուր» ՍՊԸ-ի միջև 23.12.2021թ. կնքվել է թիվ «ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-21/6-3» ծածկագրով պայմանագիր: Համաձայն պայմանագրի Ձեր ղեկավարած ընկերությունը պարտավորվել է պայմանագիրը կնքելուց հետո քառասունհինգ օրացուցային օրվա ընթացքում մատակարարել երկու հատ համակարգչային պլանշետ:

Առ այսօր Ձեր ընկերությունը չի իրականացրել վերոնշյալ պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Տեղեկացնում ենք, որ մինչև ս/թ. փետրվարի 18-ը պայմանագրային պարտավորությունները չկատարելու դեպքում համալսարանը պայմանագիրը համարելու է միակողմանի լուծված»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 28.02.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

<u>բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի</u>,

Այսպիսով՝ վերը նշված փաստերով պայմանավորված, արձանագրում եմ, որ «Լեմուր» ՍՊԸ-ն խախտել է իր և «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի միջև 23.12.2021թ. կնքված թիվ «ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-21/6-3» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Լեմուր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.03.2022թ. թիվ 26/26-1/4241-2022 գրությամբ «Լեմուր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Լեմուր» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված

բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**